

Այս տարրին թուական արժէքը կարելի է դնել իբր $\frac{1}{3}$ ւ այն թուին՝ զոր եւ տուի թրքահայաստանի գաւառներու քրքրու գանակը ցոյց տալու մէջ :

(Ամբողջ Սիւննի եւ Գրգրլ-պաշ քիւրդերու թիւը առանձին ցոյց տրուած է 410,812 մարդ : Ասոնցմէ դուրս են թիւրքերը որ ցոյց տրուած է 442,946 մարդ) :

Իրենց աշխարհագրական դիրքը Եփրատի միջև եւ շրջակաները զինուորական տեսակէտէ անոնց ժամանակակից արժէք մը կուտայ, իրենք բռնած են վայրի եւ լեռնոտ երկիրը, Երզնկայի, Գ. Ջօրաբանակի հարաւային կողմը : Այս գաւառը որ ծանօթ է Տէրսիմ անունով՝ երկար ատեն դիմադրած է ու կը շարունակէ դիմադրել թրքական լուծին դէմ :

Այստեղ անոնք կ'ապրին ցեղային ու հովուական վիճակ մը, սակայն կլիմայական խստութիւններու պատճառով հարկադրուած են տուներու մէջ բնակուիլ, մշակելով փոքր սարածութեամբ հողեր :

Տէրսիմի արեւմտեան եւ արեւելեան կողմ բնակող Գրգրլ-պաշներ խաղաղասէր եւ աշխատասէր ժողովուրդներ են, որոնց մասին ճանապարհորդները (գիտնական) յարգանքով կը խօսին :

Թէյլը Էրզրումի անգլ. հիւպատոսը իր մէկ վիճակագրութեան մէջ որ Անգլ. կառավարութեան մէկ կապոյտ գրքին մէջ հրատարակած է, Տէրսիմի Գրգրլպաշ քրդերը 110,000 կը հաշուէ : Հիմնուելով աւելի նորագոյն տեղեկութիւնների վրայ եւ կը դնեմ անոնց թիւը 50,000» :

Խօսելով Քրդերու ընդհանուր վիճակին վրայ՝ Գրգրլպաշներու զնահատութեան մէջ իր կարծիքն է. —

— «Այս ժողովուրդը ծանօթ է ամենահին պատմութեանը՝ եւ անոր նկարագիրը արդէն բաւականաչափ ճանչցուած է Եւրոպայի մէջ : Քրդերը բնակելով այս տեղերը ոչ միայն նկատուի կը դառնան մէկ միւսէն սարբեր ընկերական կիսանքի ատտիճանին հասած լինելուն, այլե լեզուի եւ հաւատքի էական բաժանումներուն համար :